Դրան զուգընթաց՝ հայերի շահերը նոյնպէս պահանջում էին — ինչպէս նաեւ վրացիներինը — կապուել Ռուսաստանի հետ եւ նրա՛ վրայ դնել իրենց փրկութեան յոյսը: Եւրոպան ամբողջ դար ու կէս խարխսեց ու բան չտուեց: Եւ եթէ տար էլ, առանց Ռուսաստանի գործօն մասնակցութեան նա ոչինչ անել չէր կարող. ազատութեան գլխաւոր պայմանը եւրոպական գործն էր, իսկ այդ գործը Հայաստան հասնել կարող էր միայն եւ միայն Ռուսաստանի վրայով: Եւ վերջապէս Ռուսաստանը այժմ արդէն բաւականաչափ զօրեղ մի պետութիւն էր, լաւ կազմակերպուած, մահմեդականութեան երդուեալ թշնամի եւ Կասպիականի ափերին էլ— ուրեմն եւ Հայաստանին — բաւական մօտեցած:

Եւ ահաւասիկ հայ մելիքներն ու իշխանները — մի կողմից՝ անցեալի ու իրենց դառն փորձերից յուսահատ, իսկ միւս կողմից՝ Պըֆալցի մեծ իշխանից թելադրուած — Իսրայէլ Օրիի ու Մինաս վարդապետի միջոցով դիմում են Պետրոս Մեծին եւ Հայաստանի ազատութիւնը հայցում:

Հայոց առաջին դիմումը — 29 Ապրիլի, 1699 թ. — Պետրոս Մեծին՝ չափազանց կարեւոր է իր պատմական նշանակութեամբ եւ հետաքրքրական՝ իր բովանդակութեամբ, լեզուով եւ արտայայտութեան ձեւերով: Ուստի եւ մի քանի քաղուածքներ բերելը աւելորդ չենք համարում.—

«Թագաւոր ինքնակալ եւ մեր գլխաւոր1). Արժանաժառանգ, պատուական թագաւոր ուռուսի Մոսկովի, եւ ամենայն մեծամեծաց, իշխանի իշխող թագաւոր, Ցարեւելից եւ հարաւային, եւ ի հիւսիսի, եւ երեքկողմին իշխանացն հրամանատու եւ վերակացու, հզօր եւ մեծ ինքնակալ թագաւոր Քրիստոնէից, պատուական եւ անթառամելի թագդ պարծանաց, գովելի եւ վաելչական, Արմատ ես արքունական, ջահ ես լուսատու ուղղադաւան, որ միշտ լոյս ածես Ազգիս համար.

Մենք մեծ Հայաստանեաց իշխաններս եւ մելիքներս ի հեռիստանէ իբր ի մօտ գոլով արտասուելով եւ պաղատելով անկանիմք ի յոտս նաղելի եւ ինքնակալ թագաւորիդ. մենք անարժանքս գրեցաք գիր քո օծեալ թագաւորիդ, որ ծանուցանեմք զմեր զամենայն խրդհութիւնս ի ձեռաց ոպի2), մենքլ այժմուս զոյհութիւն եւ փառք կու մատուցանեմք ամենայնի կարողի Աստուծոյ, որ յաղթեցիր զհակառակորդս քո.

Մենք բոլորով սրտիւ առ աստուած աղաղակեմք, որ այլ առաւել տա կարող զօրութիւն քո ինքնակալ թագաւորիդ, որ մեր ազաչանաց լսես, եւ դթաս ի վերայ մեր որ լինի քեզանօվ ազատութիւն այս տառապեալ դերի քրիստոնէից:

Կու խնդրեմք եւ կաղերսեմք առ քո աստուածասիրութիւնդ որ կարող ես աստուծոյ ողորմութեամբն ազատել զմեր խեղճ ազգն ի պէս պէս պատահմանից անօրինաց, որչափ պարծանք է քո ինքնակալ թագաւորութեանդ ի վերայ աշխարհիս եւ ի հանդերձելումն որ առնես զմեծ պարգեւն ի Քրիստոսէ, որ ամենայնի ժամու մեր ժողովուրդն աղօթող կլինին առ Աստուած քո թագաւորութեանդ մինչեւ ի գալուստն Քրիստոսի. որ դու ես թագաւոր ուղղադաւան, մենք տարակուսեալ եմք կու զոզանք, Քրիստոսի ողորմութեամբն արա մեզ ճար»3):

Այնուհետեւ նման աղերսագրերով ու դեսպանութիւններով հայերը բազմաթիւ անգամներ նորից ու նորից դիմեցին ռուսաց կառավարութեան: Պետրոս Մեծը չարունակ յուսադրում էր նրանց. յորդորում էր միշտ կազմ ու պատրաստ լինել, խոստանալով շուտով գալ եւ ազատել նրանց:

Դեռ աւելի. երկրի դրութեանը եւ մանաւանդ Պարսկաստանի ներքին կեանքին աւելի ծանօթանալու նպատակով՝ նա Իսրայէլ Օրին դեսպանութեան պատրուակով ուղարկեց

1) Պահպանել ենք բնագրի ուղղագրութիւնն ու կէտադրութիւնը եւ լեզուական բոլոր անճնայատկութիւնները. իսկ կրճատումները գրել ենք լրիւ:

2) «Պարսիկ», «պարսից» բառերի տեղ սովորաբար գործ են ածում ոպի, ըոպի իբր ծածկագիր:

3) Եղեանց, «Պետրոս Մեծի Ցարաբերութիւնները», փաստաթուղթ թիւ 6: